

## ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

«Վէմ»-ի անցեալ համարում վերջացրինք Վահրամ Եպ. Մանկունու «Գէորգ Գ. եւ իր ժամանակը» աշխատութեան առաջին մասի տպագրութիւնը: Մի քանի գործնական պատճառներով ստիպւած լինելով գործի շարունակութեան հրատարակութիւնն ընդհատել՝ ցաւով պէտք է արձանագրենք, որ այդ վերին աստիճանի հետաքրքրական եւ արժէքաւոր գրւածքը ընթերցողներին ակնկալւած ուշադրութիւնը չգրաւեց: Ուզում ենք հաւատալ, որ դրա պատճառը լեզուն էր. այսօրւայ կայ ընթերցողը նոյն իսկ Վահրամ Եպ.-ի պարզ ու դիրամտաչելի գրաբառից բան չի հասկանում:

Պէտք է խոստովանենք, սակայն, որ Մանկունու երկը «Վէմ»-ում իբրեւ յաւելւած տալով՝ մենք յոյս ունէինք, որ գէթ հայ մամուլի վարիչները կը կարողանաւ եւ քաղաքացիները կը ծանօթացնեն իրենց ընթերցողներին: Դժբախտաբար, մեր քերքերի խմբագիրներն էլ, ըստ երեւոյթի, չեն կարողացել, որ չօգտուեցին Վահրամ Եպ.-ի հաղորդած բազմաթիւ հետաքրքրական փաստերից: Ասենք՝ գորմանալու էլ շատ տեղ չկայ. նայէ՛ք մեր լրագրութեան՝ ինչո՞վ է սնւում նա. նայէ՛ք մեր խմբագիրներին ու լրագրողներին՝ ինչո՞վ են գրադրած նրանք: «Մ՛զուտած գրաբառով» շարադրւած երկարապատում մեր պատմութիւնը կարդալ ու դրանից ինչ որ քաղւածքներ անել — արժէ՞ գլուխ ցաւացնել, երբ աւելի հեշտութեամբ կարելի է օտար քերքերից նիւթեր հաւաքել ու հրատմանի հայ սակաւապետ ընթերցողին, բաւ է, որ այդ նիւթերը լինեն գգայացունց, ամբոխի սրտին խօսող եւ

... մի քանի աւելի բաժանորդ ապահովող:

Այսու հանդերձ՝ մենք չենք զոյնում, որ այդ կարեւոր աշխատութեան հրատարակութեան ձեռնարկեցինք: Եթէ այսօր հասկացող ու գնահատող քիչ կայ, տարակոյս չունինք, որ վաղը ներանց օգտուողներ շատ պիտի լինին: Վահրամ Եպ. Մանկունու աշխատութիւնը 19-րդ դարու հայոց պատմութեան ամենակարեւոր աղբիւրներից մէկն է հանդիսանալու: Մենք դժարանում ենք ցոյց տալ մի ուրիշ գիրք, որ ունենար Մանկունու գործի արժէքը: Երանի՛ր քէ հնարաւոր լինէր լոյս ընծայել եւ երկրորդ հատորը, որ պակաս արժէքաւոր չէ, իսկ որոշ մասերով նոյն իսկ աւելի քանգագին:

Այստեղ աւելորդ չենք համարում արձանագրել եւ մի փաստ, որ յատկանշական է որոշ շրջանների բարբերի գնահատութեան տեսակէտից:

«Վէմ»-ի հրատարակութեան ձեռնարկելով՝ մենք, ի միջի այլոց, դիմեցինք եւ Բարեգործականի Նուպարեան Մատենադարանին՝ խնդրելով տրամադրել մեզ իրենց մօտ գտնւած նիւթերը: Թէ՛ Պ. Գ. Սինապեանը, որ այն ժամանակ Մատենադարանի վարիչ պաշտօնեան էր Բարեգործականի կողմից, եւ քէ մատենադարանապետ Պ. Ա. Անտոնեանը սիրով ընդառաջ գնացին, եւ «Վէմ»-ը հնարաւորութիւն ստացաւ հրատարակելու մի շարք հուս նիւթեր, ի հարկէ, ամէն անգամ յիշելով եւ աղբիւրը: Ի միջի այլոց, Պ. Ա. Անտոնեանը ցոյց տուց եւ Վահրամ Եպ. Մանկունու ձեռագիրը՝ առաջարկելով հրատարակել «Վէմ»-ում, այն պայմանով, որ 500 օրինակ արտատպի Մատենադարանի հա-

ւար, վերջինիս հաշուով: Ձեռագրին ծանօթանալուց յետոյ՝ յանձն առինք այդ առաջարկութիւնը, որ ստացաւ նաեւ Պ. Գ. Սինապեանի հաւանութիւնը: Եւ այնուհետեւ, Գեորգ Գ. -ի կենսագրութիւնը լոյս տեսաւ «Վէմ»-ի 20 ք.ւերում եւ սպարամատերը իւրաքանչիւր պրակից 500-ական օրինակ աւելի տպեց 'Նուպարեան Մատենադարանի համար:

Բայց տեսէք, քէ Սֆուար Ալրոնիում ի՞նչ բարբեր են տիրում: Երբ ձեռագրի առաջին մասը լրացնելուց յետոյ՝ տպարանը հաշիւ ներկայացրեց Մատենադարանի վարչութեան՝ վերջինս մերժեց՝ առարկելով, քէ իր կողմից այդ տեսակ ասպարանք չի արած եւ, հետեւաբար, ինքը չի կարող ընդունել 500 օրինակ

գիրքը: Ի՞նչ անէինք. Գ. Սինապեանը գերեզմանում էր, Պ. Ա. Անտոնեանի յիշողութիւնը տկարացել է, իսկ գրաւոր պայմանագրութիւն մէջտեղը չկայ — ո՞վ կարող էր ենթադրել, որ պարկեշտ մարդիկ այս տեսակ գործերում ստորագրած քղքերի պէտք ունեն — մնում էր, որ «Վէմ»-ը իր վտիւս ուժերով ֆաշէր այդ բեռն էլ: Եւ ի՞նչ էր գումարը — ընդամենը 1500 ֆր. 500 օրինակ 300 էջոց հատորի համար...

Բարեգործականը անհաշիւ դրամներ է ծախսում զանազան փուն բաների վրա: Զի՞ կարող մի փոքրիկ գումար էլ յատկացնել Մատենադարանի գրքոցներում հաւաքած պատմական քանգարժէք նիւթերի հրատարակութեան համար:

ՏՈՒԹ. Ն. Տ. Ս. ԹԱՇՃԵԱՆԻ ԳԻՐԻՔԸ

Բոստոնում լոյս է տեսել ծանօթ հանրային գործիչ Տոքթ. Ն. Տ. Ս. Թաշճեանի «Ատամնարուծական Առողջաբանութիւն» գիրքը — ընտիր քղքի վրա մտնուր տպագրած սիրուն կազմով մի հատոր: Մասնագէտները վկայում են, քէ արժէքաւոր գործ է, բայց մեր ուշադրութիւնը գրաւողը այդ չէ: Մասնագիտական արժէքի մասին կը խօսին բժիշկները, մեզ հետաքրքրողը այն հանգամանքն է, որ գիրքը կազմւած է երկու լեզուով՝ ասոջին մասը հայերէն, յետոյ՝ նոյնը անգլիերէն: Որ ասել է, քէ Ամերիկայում կան շատ հայեր, որոնք այլեւս հայերէն չեն կարողում անաւո՛ր բան արտասահմանի հայ մըշակոյթի համար: «Երկու լեզուով պատ-

րաստած ըլլալու գաղափարիս ի՞նչ կըսես, գրում է հեղինակը մասնաւոր նամակում. կեանքի պահանջ է. աստիճանաբար դէպի ֆայֆայում կերթանք. անխուսափելի է: Տուներու մէջ, երեսակայէ՛, նոյն իսկ մեր տան մէջ, խօսակցութիւնը կէս առ կէս է. իսկ եթէ իմ յամառութիւնը չըլլար, այդ կէսն ալ գոյութիւն չէր ունենար: Ա՛յս է վիճակը»:

Այո՛, ա՛յս է: Եւ միա՞յն չիւս. Ամերիկայում. հոպա Հար. Ամերիկայում, հոպա Ֆրանսայում — ամէ՛ն տեղ՝ աւելի կամ պակաս: Տոքթ. Թաշճեանի գիրքը այդ տեսակէտով ակտանիչ է եւ անագանգ միաժամանակ:

